

Ուրբէն Վարդանեան

Բոլորովին վերջերս Մ. Ամանդրին, անդրադառնալով Արտաշատի քաղաքային դրամահատութեան խնդրին, այդ քաղաքին վերագրեց պղնձէ դրամների եւս երկու թողարկում¹: Չվերաքննարկելով արտաշատեան քաղաքային թողարկումների ուսումնասիրութեան պատմութիւնը² յիշեցնենք միայն, որ մինչ այժմ մենք գիտէինք երկու արժէչափ ներկայացնող հետեւեալ երեք թողարկումների մասին³:

Aa. Միջին չափ:

Դիմերես. Տիխէի գլուխը՝ պարսպաթաղով, աջ. թագի իւրաքանչիւր աշտարակի գլխին երկուական զնդիկներ. մագերի հիւսքը՝ ծոծրակի վրայ, պատկերուած է կեռիկի տեսքով, որի տակից կախուած են երկու ալիքաւոր ծոպեր, որոնցից մէկը ծածանուած է պարանոցի վրայ. կրում է ուլունք. երեւում է զգեստի վերին հատուածը՝ կլոր ճարմանդով ամրացուած: Կիտաւոր շրջանակ:

Դարձերես. ΑΡΤΑΞΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟ-ΠΟΛΕΩΣ, Նիկէն ճախրելիս, ձախ. աջ ձեռքում բռնած պսակը մեկնել է դէպի քաղաքի անուան գրութիւնը, ձախ ձեռքում ունի արմաւենու ճիւղ. ձախ դաշտում I, աջում՝ ΖΞ: Կիտաւոր շրջանակ:

- 1. 5.40 գ, 19.1 մմ, 12 ժ., ՀՊԹ 19992/77:
- 2. 5.15 գ, 20 մմ, 11 ժ., ՀՊԹ 8926:
- 3. 4.35 գ, 19.5 մմ, 12 ժ., ՀՊԹ 53744:

Թիւ 1-3-ը թողարկուած են դիմերեսի նոյն կնիքով, իսկ 2-ը եւ 3-ը՝ նաեւ դարձերեսի նոյն կնիքով:

Ab. Փոքր չափ:

Դիմերես. Նոյնը:
Դարձերես. ΑΡΤΑΞΙΣΑΤΩΝ, ցորենի հասկ. ձախ դաշտում I (°): Կիտաւոր շրջանակ⁵:

Ca.1. Մեծ չափ:

Դիմերես. Նոյնը:
Դարձերես. Նոյնը, բայց ձախ դաշտում IB, աջում՝ ΘΞ, որի տակ՝ Խ մենագիրը⁶:

Cb.2. Միջին չափ:

Դիմերես. Նոյնը:
Դարձերես. ΑΡΤΑΞΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΣ, ցորենի հասկ. ձախ դաշտում IB, աջում՝ ΘΞ, որի տակ՝ Խ մենագիրը: Կիտաւոր շրջանակ⁷:

Աջ դաշտում եղած տառերը բոլոր հետազոտողների կողմից ընդունուած են, թէեւ տարբեր մեկնաբանութիւններով՝ որպէս թողարկման տարեթուեր (ΖΞ=67 եւ ΘΞ=69): 1987 թ. հրատարակուած մի յօդուածում իմ կողմից առաջարկուել է այդ տարեթուերի մեկնակէտ ընդունել մ.թ.ա. 66 թ.: Տիգրան Բ-ի եւ Պոմպէոսի միջեւ Արտաշատում կնքուած դաշնագրի տարին⁸: Այդ թուականից հաշուած՝ արտաշատեան թողարկումները թուագրուած են մ.թ. 1/2 եւ 3/4 թթ.⁹:

Ձախ դաշտում եղած տառերի վերաբերեալ կարծիքները համերաշխ չեն, բայց հեղինակներից շատերն աւելի հակուած են դրանք նոյնպէս համարել տարեթուեր (I-10 եւ IB-12): Կարծում եմ, որ այդ տարեթուերի մեկնաբանութեան համար անհաւանական է Արտաշատի քաղաքային պոմարի մասին վարկածը,

ըստ որի՝ մ.թ.ա. 9/8 թուականին Հայաստանի թագաւոր դարձած Տիգրան Դ-ն, ըստ երեւոյթին, նոյն տարում Արտաշատին շնորհել է «մետրոպոլիս» («քաղաքամայր») տիտղոսը, որը եւ կարող էր նոր տոմարի սկզբնաւորման առիթ հանդիսանալ¹⁰:

1999 թ. Մ. Ամանդրիի ուշադրութիւնը գրաւել է մի դրամ՝ Մ. Գալէացիի հաւաքածոյից, որի դիմերեսին պատկերուած Տիխէի գլուխը ե՛ւ պատկերագրութեամբ, ե՛ւ ոճով չափազանց նման է Արտաշատի դրամների դիմերեսի Տիխէին (B.1): Այս դրամը, դարձերեսի ձախ դաշտում ունեցած AI տառերի, իսկ աջ դաշտում Ռ փակագրի առկայութեամբ, կապուած է մի այլ թողարկման հետ, որի վրայ պատկերուած է Նիկէի կիսանդրին՝ դէմքով դէպի աջ (B.2)¹¹: Ահա այս շղթան հիմք է ծառայել, որպէսզի Մ. Ամանդրին վերոյիշեալ երկու թողարկումները տեղադրի Հայաստանում՝ դրանք վերագրելով Արտաշատի դրամահատարանին: Ծանօթանալով հեղինակի կողմից ինձ ուղարկուած այս հաղորդմանը՝ անմիջապէս յիշեցի անցեալ տարի Հայաստանի պատմութեան թանգարանի կողմից ձեռք բերուած մի խումբ դրամների մէջ եղած երեք օրինակները՝ դիմերեսին Նիկէի կիսանդրու պատկերով (B.2) եւ B.1 թողարկման ոչ այնքան լաւ պահպանութեամբ մի դրամ: Հետաքրքիրն այն է, որ այդ դրամները յայտնաբերուել են հին Արտաշատի տարածքում կամ նրա շրջակայքից¹²: Սրանցից բացի, ՀՊԹ ժողովածոյում պահուած է Մ. Ամանդրիի նկարած դրամ B.1 թողարկման մի ընտիր նմոյշ, որը նախկինում եղել է Արեւելեան լեզուների Լազարեան ինստիտուտի դրամագիտական ժողովածոյի կազմում: Այս դրամի ծագման մասին որեւէ այլ տուեալ չունենք:

Դրամների Գկարագրութիւնը

Ba. Մեծ չափ:

Դիմերես. Տիխէի գլուխը՝ պարսպաթաղով, աջ. մագերի հիւսքը՝ ծոծրակի վրայ, պատկերուած է կեռիկի տեսքով, որի տակից կախուած են երկու ալիքաւոր ծոպեր. կրում է ուլունք. երեւում է զգեստի վերին հատուածը՝ կլոր ճարմանդով ամրացուած: Կիտաւոր շրջանակ:

Դարձերես. Դափնեպսակ՝ վարդակապով եւ դաշտի մէջ կախուած երկու ժապաւեններով. ձախ դաշտում՝ AI, աջում՝ Ռ:

- 5. 14.98 գ, 23.7 մմ, 7 ժ., ՀՊԹ 5470:
- 6. 12.90 գ, 23.5 մմ, 12 ժ., Ա. Այվազեանի ժող.¹³:
- 7. 8.95 գ, 24.4 մմ, 6 ժ., ՀՊԹ 19992/142¹⁴:

Թիւ 5-ը եւ 7-ը հատուած են դիմերեսի նոյն կնիքով:

Bb. Միջին չափ:

Դիմերես. Նիկէի կիսանդրին աջ. քունքից սկիզբ առնող հիւսքը (գլխի միւս կողմից եկող մագերի հետ միահիւսուած)՝ ծոծրակի վրայ, պատկերուած է կեռիկի տեսքով, որի տակից երեւում են երկու ալիքաւոր ծոպեր. մէկ այլ հիւսք, երկու ալիքաւոր ծոպեր. մէկ այլ հիւսք, քունքից բարձրանալով դէպի գագաթը, կապուած է գլխի միւս կողմից նոյն ձեւով բարձրացող հիւսքի հետ, որոնց ծայրերը պատկերուած են թեւեր յիշեցնող երկու ալիքաւոր պոչիկների տեսքով¹⁵. կրում է ականջօղ: Գծային շրջանակ:

Դարձերես. Արմաւենու ճիւղ՝ ժապաւենազարդ, գագաթը դէպի աջ կորացած, պոչի ստորին կէտը՝ անկիւնաձեւ դէպի աջ թեքուած. ձախ դաշտում՝ AI, որի տակ՝ Խ փակագիրը, աջում՝ Ռ: Գծային շրջանակ:

- 8. 6.80 գ, 20.0 մմ, 12 ժ., ՀՊԹ 19992/152: Ձախ դաշտի փակագիրը հա-

նուաճեցի իմ որդու՝ Կայոսի ձեռքով եւ թագաւորական գահը տուի Արիոբարզանին՝ մեղացիների Արտաւազդ թագաւորի որդուն» (Res Gestae Divi Augusti, 25-32): Իսկ ըստ Դիոնի՝ «Հայերը, քանի որ Տիգրանը բարբարոսների դէմ մղած ինչ-որ պատերազմի ժամանակ սպանուել էր, իսկ էրատոն էլ հրաժարուել էր իշխանութիւնից, պատերազմի ելան հռոմէացիների դէմ, որովհետեւ նրանց [վրայ իշխանութիւնը] յանձնել էին ոմն մեղացի Արիոբարզանի, որը մի ժամանակ Տիրիզատէսի հետ եկել էր հռոմէացիների մօտ. այս դէպքերը՝ կատարուեցին յաջորդ տարի, երբ կոնսուլներ էին Պուբլիոս Վինիկիոսը եւ Պուբլիոս Վարոսը» (Dion, LV, 10a.4-7): Հայաստանում, անշուշտ, եղել է բնակչութեան մի խաւ, որի համաձայնութեամբ կամ գուցէ առաջարկով Արիոբարզանը հռոմէացիների կողմից հռչակուել է Հայաստանի թագաւոր: Մինչդեռ Դիոնի վկայութիւնից ակնյայտ է, որ բնակչութեան միւս մասը խիստ թշնամաբար է ընդունել մար Արիոբարզանին Հայաստանի թագաւոր կարգելու փաստը, որը նրան դրդել է նոյնիսկ պատերազմի ելնել հռոմէացիների դէմ: Գայոսն Արիոբարզանին անձամբ ուղեկցում է Հայաստան եւ այստեղ հանդիպում է ապստամբած Հայերի դիմադրութեանը: «Ու թէպէտ Հայերը նշանակալից որեւէ գործ չկատարեցին, բայց ոմն Ադոն, որը տիրում էր Արտագերսին, Համոզեց Գայոսին ընդհուպ մօտենալ պարիսպներին եւ խոցել նրան. այս պատճառով էլ [Արտագերսը] պաշարման ենթարկուեց ու երկար դիմադրեց: Բայց երբ վերջապէս այն վերցուեց, ոչ միայն Օգոստոսը, այլեւ Գայոսը նոյնպէս ստացել էր իմպերատորի տիտղոս, եւ Հայաստանն այժմ Օգոստոսի եւ սենատի կողմից ստացաւ Արիոբարզանէսը...» (Dion, LV, 10a.4-7): Այս

դէպքի վերաբերեալ կայ նաեւ Ֆլորուսի մօտ պահպանուած մի հատուած. «Արեւելքում մենք առաւել դժուարութիւններ ունեցանք Հայերի հետ: Նա այնտեղ ուղարկեց երկու Կեսարներին՝ իր թոռներից մէկին: Երկուսի ճակատագիրն էլ կարճատեւ եղաւ, բայց մէկինը՝ նաեւ անփառունակ, քանի որ Լուկիոսը մեռաւ Մասսիլիայում հիւանդութիւնից, մինչդեռ Գայոսը վախճանուեց Սիրիայում մի վէրքից, որը նա ստացել էր պարթեւների հետ գաղտնաբար դաշնակցել սկսած Հայաստանը վերանուաճելիս: Հայերը իրենց արքայ Տիգրանի պարտութիւնից յետոյ Պոմպէոսի հիմնած կարգով մի տեսակ ստրկական վիճակում էին, ըստ որի՝ նրանք մեզանից էին ստանում իրենց առաջնորդներին: Հէնց այս ընդհատուած իրաւունքը Գայոսը վերականգնեց ոչ առանց արիւնահեղութեան, որը սակայն շատ նշանակալից չէր: Արդ Դոննէսը ձեւացրեց, թէ դաւաճանում է իր տիրոջը եւ, մօտենալով Գայոսին, որը զբաղուած էր իր իսկ կողմից նրան տրուած գրութիւնը կարդալով, որն իբր պարունակում էր գանձերի ցուցակը, անսպասելիօրէն հանեց իր սուրը եւ հարուածեց: Այդ ժամանակ, ճիշտ է, Կեսարի վէրքը ապաքինուեց, բայց քիչ ժամանակ անց... Ինչ վերաբերում է բարբարոսին, շրջապատուած զինուորներով եւ նրանց հարուածներից ընկճուած, թուրը՝ որով ինքն իրեն խոցեց, եւ խարոյկը՝ որի վրայ նետուեց իրեն խոցելուց յետոյ, հանդիսացան վրէժը Կեսարի, որը դեռ շարունակում էր ապրել»¹⁶:

Այս իրադարձութիւնները թուագրուում են ըստ Դիոնի: Գայոսի եւ Փրատակի միջեւ կայացած համաձայնութեան մասին նրա հաղորդմանը անմիջապէս յաջորդում է Հայաստանի իրադարձութիւնների վերաբերեալ շարադրանքը:

Վերոյիշեալ երկու կոնսուլներն իշխել են մ.թ. 2 թ., հետեւաբար հռոմէա-պարթեւական համաձայնութիւնը կարող էր կնքուած լինել մ.թ. 1 թ., որին յաջորդող տարում, 2 թուականին, տեղի են ունեցել հայաստանեան դէպքերը:

Ըստ Տակիտոսի՝ Արիոբարզանը մահանում է դժբախտ պատահարից (Tac., Annales, II, 3-4), իսկ «նրա մահից ոչ շատ ժամանակ անց» Օգոստոսի կողմից Հայաստանի գահին է հաստատուում նրա որդին՝ Արտաւազդը (Dion, LV, 10a.4-7. Res Gestae Divi Augusti, 25-32): Հայերը, սակայն, չեն ցանկանում իրենց վրայ թագաւոր ունենալ Արիոբարզանի զաւակներին (Tac., Annales, II, 3-4) եւ սպանում են Արտաւազդին (Res Gestae Divi Augusti, 25-32):

Համադրելով դրամագիտական եւ պատմական գրաւոր աղբիւրներէ միմեանց լրացնող տուեալները՝ կարելի է թուաթերեւս, հասկանալ մ.թ. 1-ից 3/4 թուականների ընթացքում դրամաթողարկման այս սերիայի ի յայտ գալու հանգամանքները եւ կապը՝ տեղի ունեցած պատմական իրադարձութիւնների հետ:

Մ.թ. 1/2 թուականով թուագրուող A թողարկումը յայտնուել է Տիգրան Դ-ի վախճանից եւ էրատոյի՝ գահից հրաժարուելուց յետոյ, երբ արդէն յայտնի էր դարձել, որ թափուր մնացած Հայկական գահը հռոմէացիները մտադիր են շնորհել մար Արիոբարզանին: Այս որոշման ընդմար Արիոբարզանին: Այս իրողութիւն դիմացող ուժերը, մինչ այն իրողութիւնը դառնար, ապստամբում են կայսեր կը դադարեցնուեցան դէմ: Ապստամբադաքականութեան դէմ: Ապստամբութեան կենտրոնը Արտաշատ մայրաքաղաքն էր, որտեղ էլ արտաշատցիներէ հաղաքն էր, որտեղ էլ արտաշատցիներէ համայնքի անունից թողարկուում են առամայնքի անունից թողարկուում են կայսեր ջին դրամները, որոնց վրայ, մեր կողմից ենթադրուող արտաշատեան տոմարից բացի, կար 67 թուականը՝ որպէս յիշե-

ցում Պոմպէոսի եւ Տիգրանի միջեւ մ.թ.ա. 66 թ. կնքուած պայմանագրի եւ այժմ հռոմէացիների կողմից այդ պայմանագրի խախտման մասին:

Երբ մ.թ. 2 թուականին Գայոսը լրացուցիչ հռոմէական զօրքերով ժամանում է Հայաստան, ապստամբներն, ըստ երեւոյթին, հարկադրուած են լինում լքել Արտաշատը եւ ամրանալ Արտագերս ամրոցում¹⁷: Հակամարտութիւնն իր գագաթնակէտին է հասնում Հէնց այստեղ եւ տեւում է բաւական երկար. «[Արտագերսը] պաշարման ենթարկուեց ու երկար դիմադրեց» (Dion, LV, 10a.4-7), «կայսերական զօրավարները երկար ժամանակ պաշարելուց յետոյ գրաւեցին եւ պարիսպները լուց յետոյ գրաւեցին եւ պարիսպները քանդեցին» (Strabo, XI, 14.6): Արտաշատեան սերիայում միջանկեալ տեղ գրաւող B.1 եւ B.2 թողարկումները հատուել են այս թուականին, բայց նրանցում բացակայում է ΑΡΤΑΞΙΣΤΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΣ գրութիւնը, որը կար նախորդ՝ Α թողարկման վրայ: Կարծում եմ, որ սրա բացատրութիւնը կարող է լինել այն, որ B խմբի դրամները թողարկուել են ոչ թէ Արտաշատում, այլ մէկ ուրիշ վայրում, Այս եզրակացան է՝ Արտագերսում: Այս եզրակացութեան համար կարող է հիմք ծառայել մէկ այլ փաստարկ եւս՝ Ἰϛ փակագիրը: Այս միջնադարեան աղբիւրներում Արտաշայ միջնադարեան աղբիւրներում Արտագերս անունով յիշատակուող բերդը յուրաքանչեւ աղբիւրներում յիշատակուում է նարէն աղբիւրներում յիշատակուում է Αρταγείρα (Ստրաբոն, Դիոն Կասսիոս) կամ Αρταγίγαρα (Պտղոմէոս), իսկ լատիկամ Artagera կամ Artogerassa (Ամիանոս Մարկելինոս) ձեւերով¹⁸: Վերոյիշեալ փակագրում տեղ են գտել բերդի անուան A, P, T եւ Γ (այդպէս գտել բերդի անուան T տառի հորիզոնական զօնիկի դէպի աջ երկարացումը) տական զօնիկի դէպի աջ երկարացումը) տառերը: Իսկ եթէ համարենք, որ Γ տառը փակագրում արտացոլուած չէ, ապա այն

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **M. Amandry**, *Du monnayage d'Artaxisata et des soi-disant monnaies d'Aegospotami*, Bulletin de la Société Française de Numismatique 9, Novembre, 2002, pp. 173-177.

2 Տե՛ս մասնատրապէս՝ **E. Babalon**, *Artaxisata*, Compte-rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres (1911), pp. 363-374. **M.-L. Chaumont**, *A propos d'une ère d'Artaxata, capitale de la Grande Arménie*, Revue des Etudes Arméniennes 18 (1984), pp. 394-409. **Զ. Պտուկեան**, *Հայաստանի վերաբերեալ հոնմէական դրամներ եւ մեդալիոններ*, Վիեննա, 1971, էջ 191-194. **Խ. Մուշեղեան**, *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.*, Երևան, 1983, էջ 108-109. **Р. Варданян**, *К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи*, ՊԲՀ, թիւ 2, 1987, էջ 195-207. **A. Moushegian, G. Depeyrot**, *Hellenistic and Roman Armenian Coinage (1st c. BC - 1st c. AD)*, Wetteren, 1999 [=Moneta 15], pp. 45-46, 61-62, 184.

3 Համեմատութիւնը հեշտացնելու համար պահպանում եմ Մ. Ամանդրիի կողմից սերիաներին եւ թողարկումներին տրուած համարները:

4 Այս տիպի եւս մէկ դրամ հրատարակուած է՝ Classical Numismatic Group, Auction 36, September 15, 1999, N 769, 5.77 գ, 17 մմ:

5 Այս տիպը ներկայացնող առաջմ միակ դրամը, որի չափագիտական տուեալներից ինձ յայտնի են միայն դրամի տրամագիծը՝ 17 մմ, եւ առանցքային յարաբերութիւնը՝ 1 ժամ, յայտնաբերուել է Արտաշատում: Տեղեկութեան եւ դրամի լուսանկարը տրամադրելու համար շնորհակալութիւն եմ յայտնում Ա. Արշակեանին:

6 Այս տիպի միակ նմուշը պահում է Ֆրանսիայի Ազգային գրադարանում, M 7981, 14.62 գ, 25 մմ, 12 ժ. առանցքային յարաբերութեամբ. տե՛ս **M. Amandry**, *Op. cit.*, p. 175-176, C, 1.1 (տե՛ս լուսանկար՝ Ca):

7 Յաւանի է երկու օրինակ. մէկը՝ Ֆոն Ռեյնների նախկին ժողովածոյից, 7.45 գ (ըստ **M. Amandry**, *Op. cit.*, p. 177) եւ Classical Numismatic Group 51 (1999), N 770, 7.09 գ, 22 մմ (տե՛ս լուսանկար՝ Cb)

8 **Р. Варданян**, *Ук. соч.*, ст. 201-207.

9 Արտաշատի դրամահատարանում պոմպէտեան տոմարի օգտագործման մասին տեսակէտը կարելի է գտնել նաեւ վերջերս Ա. Մուշեղեանի եւ Ժ. Դեպէրոյի կողմից հրատարակուած վերոյիշեալ գրքում, էջ 45-46, 61-62, 184: Հաշուարկը, սակայն, սխալ է կատարուած, եւ դրամները թուագրուած են համապատասխանաբար մ.թ.ա. 1 եւ մ.թ. 2 թուականներով (էջ 184):

10 **Ռ. Վարդանեան**, *Արտաշատում պոմպէտեան տոմարի կիրառման եւս մի վկայութիւն*, Հանդէս

Ամսօրեայ, 1-12, 2000, էջ 130, ծնթ. 19 = **R. Vardanyan**, *A dated Copper Coin of Artaxias II: Evidence on the Use of the Pompeyan Era in Artaxata*, Armenian Numismatic Journal XXVII, 2001, p. 92, note 20.

11 Այս դրամը նախկինում որոշ վերապահութեամբ վերագրուել է Թրակիայի Աեգոսպոտամի քաղաքին. տե՛ս **M. Amandry**, *Op. cit.*, p. 174:

12 Աւելի ստույգ տուեալներ չունենք, քանի որ դրամները յայտնաբերուել են չարտօնուած պեղումների ընթացքում:

13 Խորին շնորհակալութիւնս Ա. Այվազեանին, իր ժողովածոյի դրամները ուսումնասիրութեան համար սիրալիորէն տրամադրելու եւ դրանք հրատարակելու թոյլտութեան համար:

14 Այս տիպի եւս 4 դրամների մասին յիշատակութիւնը տե՛ս **M. Amandry**, *Op. cit.*, p. 175: Դրանց կշիռներն են՝ 10.42 գ, 11.03 գ, 12.54 գ, 14.20 գ:

15 Գագաթին փնջաձե կապուած եւ երկու պոչիկներ ունեցող կողային հիւսքերով սանրուածքի այս ձեւը, հաւանաբար, բնորոշ էր կոյս աստուածուհիներին. լուսական եւ հոնմէական դրամների վրայ այդպէս պատկերում էին միայն Արտեմիս-Դիանան եւ Նիկէ-Վիկտորիան: Տե՛ս, օրինակ, **S. Ireland, S. Atesogullari**, *The Ancient Coins in Amasra Museum*, in, *Studies in Ancient Coinage from Turkey*, London, 1996, p. 118, nos. 11-14, Plate 51:

16 Ծնորհակալութիւնս եմ յայտնում Զուստո Տրախնային այս հատուածը բնագրի լեզուով եւ ֆրանսերէն թարգմանութեամբ (**Paul Jal**, *Florus. Oeuvres*. Tom II, Les Belles Lettres, Paris, 1967, p. 71) հայթայթելու եւ ինձ ուղարկելու համար:

17 Արտագերսի ճշգրիտ տեղադրութիւնը պարզուած չէ, բայց հաւանական է համարում, որ այն գտնուել է Քերս կամ Քեոս գիղի տեղում՝ Արաքսի ձախ ափին, Ախուրեանի գետաբերանից արեւմուտք. տե՛ս **Ղ. Ալիշան**, *Այրարատ*, Վեներտիկ-Ս. Ղազար, 1890, էջ 57-58. *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, 1, Երևան, 1986, էջ 488:

18 **Ղ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 57:

19 *Հայ ժողովրդի պատմութիւն*, 1, Երևան, 1971, էջ 708. **Հ. Յ. Ասատուրեան**, *Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռովմայ 190 էն ն.թ. մինչեւ 428 յ.թ.*, Վեներտիկ-Ս. Ղազար, 1912, էջ 142:

20 **Ռ. Վարդանեան**, *Ազարակի 2001 թ. հնագիտական պեղումներից յայտնաբերուած Օգոստոս կայսեր դէմարը, Հին Հայաստանի մշակոյթը XII*, Հանրապետական գիտական նստաշրջան. գեկուցումների հիմնադրոյթներ, Երևան, 2002, էջ 65-70:

21 **Ռ. Վարդանեան**, *Հնագիտական ժառանգութիւնը՝ ազգային հարստութիւն*, Օրէնք եւ իրականութիւն, 7, 2002 (ապրիլ), էջ 29-31:



